Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 2-3 (523-4) փետրվար 1-28, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

ՀՅԴ-ն հավատում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ուժին

Արցախի շուրջ տեղի ունեցող քաղաքական գործընթացների համատեքստում վերջին զարգացումները, մասնավորապես Ռուբեն Վարդանյանի պաշտոնանկությունը, հակառակ ներկայացված բացատրություն-հիմնավորումների, բազմաթիվ հարցերի ու մտահոգությունների տեղիք է տալիս: Հանրային տրամադրությունների անտեսմամբ եւ առանց դերակատար քաղաքական ուժերի կոնսենսուսի նման որոշման կայացումը, անկախ դրդապատճառներից, ինքնին անընդունելի է:

Խնդիրն այն է, թե Արցախի դիմադրողականության առումով որքանով է կայացված որոշումը ճիշտ: Ի սկզբանե հայտնի էր, որ պետնախարարի պաշտոնում Ռուբեն Վարդանյանի նշանակումը թե՛ Ադրբեջանում, թե՛ Հայաստանի ու Արցախի որոշակի շրջանակների մոտ լուրջ հակազդեցության էր արժանանալու: Այդպես էլ եղավ, երբ ալիեւյան բռնապետությունն ու ՀՀ իշխանությունը միաժամանակ ճնշում բանեցրին Արցախի վրա, որպեսզի Ռուբեն Վարդանյանը հեռացվի պաշտոնից:

Այս կացությունն անընդունելի է եւ մեծագույն հարված Արցախի Հանրապետության ներքին անհրաժեշտ կուռ միասնականությանը:

Հակառակ իրողություններին, հնարավոր էր դարձել Արցախում դրական տեղաշարժեր արձանագրել՝ հույսն ու պայքարի ոգին անաղարտ պահելով. վերջին ամիսներին արցախահայության դրսեւորած տոկունությունն ու կամքը արժանացել էին համահայկական գնահատանքի:

Այդ հույսը հաղթանակների վերածելու գործում բոլորս անելիք ունենք: Նպատակների ու դրանց հասնելու միջոցների հստակ ձեւակերպման ամենօրյա հետեւողական աշխատանքը, որքան էլ դժվար, անարդյունք չի կարող մնալ: Հակառակ ներքին ու արտաքին դավադիր ծրագրերի, հայության արժանապատվության եւ լինելիության պայքարը պետք է շարունակվի:

ՀՅԴ-ն հավատում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ուժին եւ շարունակելու է իր բոլոր հնարավորություններով նպաստել դիմադրության ու պայքարի գործին:

ՀՅԴ Բյուրո
28 փետրվարի, 2023 թ.

Արցախի խորհրդարանի երեք խմբակցությունները չեն մասնակցել ԱՀ ԱԺ նիստին

Հաշվի առնելով ներքին խնդիրները, մեր առջեւ ծառացած մարտահրավերները՝ երեք քաղաքական ուժերով հավելյալ քննարկումներ ենք ունեցել եւ որոշել, որ չենք մասնակցելու այսօրվա նիստին: Այս մասին փետրվարի 23-ին կայացած Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նիստի սկզբնամասում հայտարարել է ԱՀ ԱԺ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը: Նա հիշեցրել է, որ երեկ երեք ընդդիմադիր քաղաքական ուժերով Արցախի ներքաղաքական խնդիրների մասին հայտարարություն են հրապարակել, ինչից հետո ԱՀ ԱԺ «ՀՅ Դաշնակցություն», «Արցախի ժողովրդավարական կուսակցություն», «Արցախի Արդարություն» խմբակցությունների անդամները հեռացել են նիստերի դահլիճից:

Իշխանություններն իրավունք չունեն շեղվելու պայքարի ճանապարհից

«Արդարություն» կուսակցության, ՀՅԴ Արցախի կառույցի եւ Արցախի ժողովրդավարական կուսակցության համատեղ հայտարարությունը Արցախում ստեղծված իրավիճակի եւ հնարավոր զարգացումների համապատասխանատվության մասին

2020թ. պատերազմից հետո մեր երկրում ծագող խորքային ճգնաժամային երեւույթները եւ իշխանությունների՝ դրանք լուծելու անպատրաստությունն ու վճռականության բացակայությունը հանգեցրել են ներքաղաքական վտանգավոր զարգացումների: Դրա արդյունքում հաճախակի փոխվում են կառավարության անդամները եւ ստեղծվում են իրար կրկնող պետական կամ հանրային նոր մարմիններ, որոնք լրջորեն վնասում են կառավարման համակարգի արդյունավետությանը:

Խորքային խնդիր է դարձել նաեւ Արցախի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների ներկայիս ոչ բավարար մակարդակն ու որակը: Հետպատերազմյան ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործող իշխանությունների կողմից ուղղակի կամ անուղղակի հետեւանքով է գրանցվում ազգային խնդիրների եւ, մասնավորապես, միջազգային հարթակներում Արցախի շահերի պաշտպանության գործում:

Հայկական երկու հանրապետությունների փոխհարաբերություններում նվազող վստահության հանգամանքն արտառոց երեւույթ է: 2020թ. նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարության ստորագրումից եւ դրան հաջորդած ոչ հրապարակային պայմանավորվածությունների արդյունքում Արցախի համար կենսական հարցերում զիջումների գնալու համաձայնությունը ակնհայտ հակասում է Հայաստանի գործող իշխանությունների՝ Արցախի հարցով հայտարարված ծրագրային դրույթներին:

Մենք իրավունք չունենք եւ չենք կարող մոռացության տալ այն իդեալները, որոնք մեզ առաջնորդել են ուղիղ 35 տարի առաջ՝ 1988թ. փետրվարյան օրերին, երբ գտնվելով առավել դժվարին պայմաններում՝ կարողացանք ոչ միայն միասնության հասնել Արցախի ներսում, այլեւ պայքարի ալիքը տարածել մայր Հայաստանում եւ Սփյուռքում:

Աշխարհաքաղաքական արագ փոփոխվող եւ ոչ նպաստավոր միջավայրում անչափ կարեւոր նշանակություն է ստանում ներքաղաքական միասնության ու կայունության գործոնը, որը 2020թ. աղետաբեր պատերազմից հետո դարձել է Արցախի սուբյեկտայնությունը պահելու գրեթե միակ միջոցը: Ստիպված ենք արձանագրել, որ այդ համատեքստում նկատելի է նաեւ ՀՀ իշխանությունների ուղղակի կամ անուղղակի դերակատարությունը՝ ներքաղաքական ու համահայկական միասնությունը տրոհելու եւ պայքարի ոգին կոտրելու գործում, որին, ցավոք, հիմնականում պասիվորեն ենթարկվում են նաեւ ԱՀ իշխանությունները:

Փաստ է նաեւ, որ վերջին շրջանում, հակառակ նախորդ երկու տարիներին Արցախի ներքաղաքական ամրության համար գործադրված ջանքերի, կտրուկ ակտիվացել են արտաքին ազդեցության գործոնները, եւ այդ միջոցով փորձ է արվում կոտրել Արցախի ժողովրդի՝ իր ապագայի համար պայքարելու կամքը: Հենց այդ համատեքստում պետք է դիտարկել անցյալ տարվա դեկտեմբերի 12-ից Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհի առայսօր շարունակվող շրջափակումը:

Չի կարելի անուշադրության մատնել այն հանգամանքը, որ Արցախի ժողովրդի վճռականության վրա ազդելու փորձերն ակտիվացել են այն բանից հետո, երբ 2022թ. ապրիլի 14-ին Արցախի Ազգային ժողովի կողմից սահմանվել են «կարմիր գծեր», որոնց հատումը ցանկացած պարագայում անթույլատրելի է: Դրան հաջորդել է Արցախի ժողովրդի կողմից միասնականության պահպանման եւ 1988թ. սկսված պայքարի ոգին ամուր պահելու պատրաստակամությունն ապացուցող 2022թ. հոկտեմբերի 30-ի եւ դեկտեմբերի 25-ի բազմահազարանոց երկու հանրահավաքները: Նման ձեւով համաժողովրդական կամքի արտահայտումը ոչ այլ ինչ է, քան յուրատեսակ պլեբիսցիտ՝ արցախահայության դիրքորոշումը վերահաստատելու ուղղությամբ: Քաղաքական այս կեցվածքով մենք նաեւ յուրահատուկ ազդակներ ենք փոխանցել մեր հայրենակիցներին թե՛ Հայաստանի Հանրապետությունում եւ թե՛ Սփյուռքում:

Այսքանով հանդերձ, երբ 70 եւ ավելի օրեր Արցախի ժողովուրդը գիտակցված ու համբերատար դիմակայում է շրջափակմանը, գործող իշխանությունները իրավունք չունեն շեղվելու ՊԱՅՔԱՐԻ ճանապարհից: Այս տրամաբանությանը հակառակ զարգացումների դեպքում ամբողջ պատասխանատվությունը մնալու է օրվա իշխանությունների վրա:

Ցանկացած բացթողում, սխալ որոշում եւ չհիմնավորված հաշվարկ, որը կարող է վնասել մեր ընդհանուր նպատակներին եւ ջլատել մեր ժողովրդի պայքարի ոգին, կարժանանա հանրային կոշտ հակազդեցության:

Անթույլատրելի ու վտանգավոր ենք համարում իշխանությունների այն վարքագիծը, երբ սեփական անկարողությունը փորձում են կոծկել ԱՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա ստեղծված ժողովրդաիշխանությունն ապահովող մարմինների նկատմամբ անվստահության քողի ներքո:

Մենք ազդարարել ենք վերազարթոնքի՝ համահայկական պայքարի նոր հանգրվանի մասին եւ շարունակելու ենք մեր մասնակցությունը բերել ժողովրդի իղձերի իրականացման համար տարվող համահայկական պայքարին:

«Արդարություն» կուսակցություն
ՀՅԴ Արցախի կառույց
Արցախի ժողովրդավարական կուսակցություն
22 փետրվարի, 2023թ.

Քողարկված ապահարզան կամ քաղաքական բանավեճ

Փետրվարի 23-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը Ռուբեն Վարդանյանին ազատել է պետական նախարարի պաշտոնից: Այդ մասին նա հայտարարել է կառավարության նիստի ժամանակ: Նա բարձր է գնահատել Վարդանյանի ջանքերը թե՛ Արցախի մասին միջազգային իրազեկվածության բարձրացման եւ թե՛ շրջափակման ընթացքում ներքին բազմաթիվ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Արայիկ Հարությունյանը նշել է, որ պետական նախարարի պարտականություններն առաջարկել է ստանձնել գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանին:

Կառավարության նիստի ժամանակ Արայիկ Հարությունյանը հանդես է եկել ուղերձով, որում նախ անդրադարձել է Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի (Քաշաթաղի) միջանցքի տեւական արգելափակմանը. «Ավելի քան 70 օր արցախցիները համառորեն պայքարել եւ շարունակում են իրենց պայքարը մեր սրբազան հայրենիքում արժանապատվորեն ապրելու եւ արարելու, մեր նախնիների պատգամը սրբորեն պահելու եւ մեր նահատակված քույրերի ու եղբայրների շիրիմներին տրված երդումն անխախտ պահելու համար: Այս պայքարն անդադար ու անվերջ է լինելու, այն կարող է ավարտվել միայն հաղթանակով»:

Այնուհետեւ նա խոսել է շրջափակման հետեւանքների մասին, որն, ըստ նրա, Արցախի ժողովրդի վրա ունեցել է ազդեցություն հետեւյալ երեք ուղղություններով՝ ազատ տեղաշարժի սահմանափակում, հոգեբանական ահաբեկչություն եւ կենսական ենթակառուցվածքների աշխատանքի խափանում: Հունվարի 9-ից լրիվությամբ խափանելով Հայաստանից եկող էլեկտրամատակարարումը, իսկ շրջափակման ողջ ընթացքում կանոնավոր կերպով խափանելով գազամատակարարումը՝ ադրբեջանական կողմը միտումնավոր հարուցել է շարունակական էներգետիկ ճգնաժամ՝ որպես ճնշման հիմնական միջոց: Այս ողջ ընթացքում մեծ ծավալով պակասել են Սարսանգի ջրամբարի ջրային պաշարները, քանի որ անհամեմատ ավելի շատ ջուր է բաց թողնվել, քան Սարսանգ մուտք գործող ջրային պաշարները: Այժմ վիճակն արդեն կրիտիկական է, ինչը նշանակում է, որ այսուհետ ունենալու ենք էներգետիկ պաշարի ծայրահեղ սղություն՝ իր բոլոր հետեւանքներով:

Նրա խոսքով՝ նմանօրինակ գործողություններով Ադրբեջանը հետապնդում է Արցախի ժողովրդի էթնիկ զտման նպատակ՝ «չկա հայ Արցախում, չկա խնդիր» տրամաբանությամբ: Իսկ ավելի միջնաժամկետ ու կարճաժամկետ կտրվածքում նրանք նպատակ ունեն նոր կենսական զիջումներ կորզել Արցախից ու Հայաստանից, փլուզել Արցախի ինքնիշխանությունը, տնտեսությունը, մեծացնել մեր կախվածությունն իրենցից, հոգեբանական ահաբեկչությամբ խթանել արտագաղթը եւ այլն:

Այս առումով, ըստ Արայիկ Հարությունյանի, մեր պայքարի ռազմավարական նպատակը հայկական, անկախ ու անվտանգ Արցախի պահպանումն ու ամրապնդումն է, իսկ այս փուլի գլխավոր նպատակը ադրբեջանական սադրանքներին վճռականորեն դիմակայելն է, որպեսզի թույլ չտանք էթնիկ զտման քաղաքականության հաջողումը: «Պայքարի գլխավոր միջոցն Արցախում հաստատակամորեն ապրելն է՝ առանց տրվելու հոգեբանական ճնշման տարաբնույթ սադրանքներին: Երկրորդը՝ կենսական շահերի ու կարմիր գծերի անկոտրում պաշտպանությունն է՝ թույլ չտալով դրանց անդառնալի ոտնահարումը: Իսկ երրորդը՝ Ադրբեջանի հանդեպ միջազգային գործնական ճնշման ավելացումն է, որտեղ Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի դերը պակաս կարեւոր չէ»,- նշել է ԱՀ նախագահը: Ըստ նրա՝ մեր պայքարի ռազմավարական նպատակին հասնելու համար պետք է երկար ճանապարհ անցնենք՝ հաշվի առնելով հակամարտության բարդությունը, ադրբեջանական հայատյաց քաղաքականությունը, տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրի անկայունությունը եւ մեր ներքին խոցելիությունները: Իսկ շրջափակման այս պայմաններում մեր պայքարն արդեն բավականին կանխարգելիչ արդյունքներ է ապահովել, եւ որոշակի դրական միտումներ կան, որ առաջիկա օրերին այս ճգնաժամային իրավիճակը կարող է զգալիորեն մեղմանալ, ընդ որում՝ առանց մեր կենսական շահերն ու կարմիր գծերը խախտելու կամ վնասելու:

Խոսելով պայքարի կարմիր գծերի մասին՝ Արայիկ Հարությունյանը նշել է՝ «Արցախում մեր ժողովուրդը պետք է ապրի ինքնիշխան, անվտանգ ու արժանապատիվ կյանքով, մենք պետք է ունենանք ինքնորոշման ու սեփական ճակատագիրը մեր հայրենիքում տնօրինելու երաշխավորված իրավունք, մինչեւ հակամարտության համապարփակ եւ վերջնական կարգավորումը ստատուսքվոն պետք է անշեղորեն պահպանվի, իսկ խախտողները պետք է ենթարկվեն միջազգային ամենակոշտ արձագանքի ու պատասխանատվության, հանրային իշխանությունը պետք է իրականացվի

Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված կարգով, Արցախի ներքին կյանքում ծագող հարաբերությունները պետք է կարգավորվեն բացառապես Արցախի օրենսդրության իրավակարգավորումների շրջանակում: Մեր պետական խորհրդանիշները ենթակա են պահպանման սրբությամբ ու ամենայն պատասխանատվությամբ»:

«Ադրբեջանի հետ երկխոսության եւ հակամարտության կարգավորման համար անհրաժեշտ է ապահովել կայուն ու փոխվստահելի միջավայր՝ բացառելով սադրանքները, ուժի կիրառման դեպքերը եւ հոգեբանական բռնության դրսեւորումները, որպեսզի հնարավոր լինի քննարկել երկուստեք մտահոգող՝ գոյություն ունեցող հարցերը: Շրջափակումը պետք է վերացվի, եւ Արցախը պետք է ունենա անխափան ու անսահմանափակ ցամաքային հաղորդակցություն Հայաստանի Հանրապետության հետ՝ առանց ադրբեջանական կողմի որեւէ ներգրավվածության: Պաշտոնական երկխոսությունը կարող է կայանալ միջազգային համապատասխան ձեւաչափի շրջանակներում, որը կարող է լինել փոխընդունելի սկզբունքների, միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, ներառյալ՝ իրավահավասարությունը, բանակցային պատվիրակությունների կազմերը պետք է որոշվեն բացառապես կողմերի կողմից: Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը սակարկման ենթակա չէ: Դա մեր ժողովրդի բնական ու հիմնարար իրավունքն է՝ ամրագրված նաեւ միջազգային հանրահայտ փաստաթղթերով,

Արցախը երբեք չի հրաժարվելու իր ինքնիշխանությունից, եւ չի կարող որեւէ խոսք լինել հարեւան Ադրբեջանի հետ ինտեգրացիայի մասին»,- ուղերձում ասել է նա:

Նա կարեւորել է փոխադարձ հարգանքն ու հանդուրժողականությունը երկրի ներսում. բոլորը պետք է գիտակցեն, որ մենք ներսում թշնամիներ չունենք, մենք ընտրել ենք մեր հայրենիքում ապրելու եւ պայքարելու արժանապատիվ ճանապարհը, եւ բոլորս պայքարի նույն շարքում ու դիրքում ենք գտնվում:

Արայիկ Հարությունյանը հայտարարել է, որ ջանք ու եռանդ չի խնայելու Արցախում ներքին համերաշխությունն ու միասնականությունն իրականություն դարձնելու համար: «Սրանք լոկ խոսքեր չեն, բոլորս պետք է փոխվենք, այդ թվում՝ ես, եւ իմ առաջիկա քայլերը համոզիչ կերպով դառնալու են այս խոսքերի ու հայտարարությունների գործնական արտահայտությունը»,- ասել է նա:

Նա վստահեցրել է նաեւ, որ Արցախում որեւէ մեկի, որեւէ խմբի կամ ուժի շահերը սպասարկելու համար սահմանադրական փոփոխություն չի կատարվելու:

Անդրադառնալով Ռուբեն Վարդանյանին ազատելու որոշմանը՝ նշել է, որ Ռուբեն Վարդանյանն իր ամենամտերիմ ընկերներից է. «Այս ողջ ընթացքում ես եւ Ռուբեն Վարդանյանը եղել ենք միասին՝ ամենօրյա ռեժիմով հետեւելով ինչպես Արցախում, այնպես էլ արտաքին աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, զարգացումներին, մշտապես մտքեր ենք փոխանակել ստեղծված իրավիճակում լուծումների շուրջ: Ես շնորհակալ եմ պարոն Վարդանյանին այն բանի համար, որ ինչպես ընկերական, այնպես էլ գործընկերային հարաբերություններում նա մշտապես առավելագույն չափով ձգտել է կիսել պատասխանատվությունն ինձ հետ եւ ոչ թե սահմանադրական նորմերի վրա հղում անելով՝ փորձել բարդել ինձ վրա: Բայց, մյուս կողմից, նա գիտակցումով եւ ըմբռնումով էր մոտենում նաեւ Արցախում ստեղծված իրավիճակի ու հետագա բոլոր խնդիրների համար իմ անձնական պատասխանատվության ծավալին ու չափին: Գիտակցելով Արցախի ու մեր ժողովրդի հանդեպ պատասխանատվությունը եւ Արցախը զարգացնելու եւ առաջիկա մարտահրավերներին դիմագրավելուն պատրաստ լինելն ապահովելու փոխարեն՝ մեր բոլորիս եւ պետության, առանց փակագծեր բացելու, բոլոր առումներով դիմադրողականությունը չսպառելու համար որոշում եմ կայացրել Ռուբեն Վարդանյանին ազատել պետական նախարարի պաշտոնից»,- ասել է նա՝ վստահություն հայտնելով, որ Ռուբեն Վարդանյանը մնալու է Արցախում եւ իր ակտիվ հասարակական գործունեությամբ բազմապատկելու է Արցախի զարգացմանն ուղղված իր ջանքերը:

«Որքան էլ դժվար թվա պայքարը, միեւնույն է՝ լուծումներ կան եւ դրանից փախչելը փախուստ է սեփական արժեքներից ու պատասխանատվությունից: Իսկ պետությունը, առավել քան երբեւէ, բոլոր հնարավորություններով կանգնած է լինելու յուրաքանչյուր քաղաքացու կողքին՝ կիսելով պայքարի ու պատասխանատվության պատվաբեր բեռը: Հետեւաբար, մենք շարունակում ենք մեր պայքարը հանուն հայկական, անկախ ու անվտանգ Արցախի՝ վճռականորեն ապրելով եւ սրտացավորեն գործելով Արցախում»,- եզրափակել է ելույթը Արայիկ Հարությունյանը:

Նիստի ժամանակ ելույթով հանդես է եկել Ռ. Վարդանյանը, որտեղ շնորհակալություն է հայտնել նախագահին միասին անցած ճանապարհի եւ իր նկատմամբ հավատի համար:

Այնուհետեւ նշել է, որ չնայած ինքն իրեն խոսք էր տվել, որ պետական աշխատանքի չի անցնելու, բայց եթե գալիս է պաշտպանելու հայրենիքը, չի կարող լինել՝ ուզում եմ, չեմ ուզում, կարող եմ, չեմ կարող. եթե պետք է, ուրեմն այդպես է պետք անել:

Նա մի շարք թեզերի է արձագանքել. «Առաջինը, ինչու ես հրաժարական չտվեցի: Ուզում եմ, որ պարզ լինի, ես համարել եմ, որ զինվոր եմ, չեմ կարող հրաժարական տալ, եթե պետք է՝ գերագույն գլխավոր հրամանատարը պետք է ինձ ազատի գործից:

Երկրորդը, վստահ եմ, որ մենք շատ ծանր ժամանակահատվածում շատ կարեւոր գործ ենք արել, եւ ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն մարդկանց, ովքեր աշխատել են այս ծանր ճգնաժամի պայմաններում՝ առավոտյան ժամը 7-ից մինչեւ գիշերվա 2-ը, առանց հոսանքի եւ գազի՝ ցույց տալով, որ որպես թիմ պատրաստ են ամեն ինչի: Երրորդը, դրսի ճնշումը իսկապես շատ մեծ էր, պարոն նախագահը ավելի շատ տեղեկություն ունի, եւ հասկանում է իրավիճակը»:

Նա նշել է, որ Արցախում իր մնալու հետ կապված ճնշում կա, բայց ոչ միայն չի գնալու, այլեւ չի պատկերացնում իրեն առանց Արցախի: Նա կշարունակի զբաղվել իր նախկին գործունեությամբ:

«Ֆինանսական, կառավարման եւ այլ հարցերից ավելի կարեւոր էր այն արձանագրումը, որ Ադրբեջանը, որը հույս ուներ մեզ ծնկի բերել, կոտրել, չարաչար սխալվեց: Ադրբեջանը տեսավ, որ մենք դարձանք ավելի միասնական, եւ անգամ վերացան անտարբերության դրսեւորումները: Իսկապես, շատ ոգեւորիչ էր լսել, թե ինչպես էին մարդիկ տարբեր համայնքներում ասում՝ մենք պատրաստ ենք դիմանալ առանց գազի ու լույսի, միայն թե մեզ մի դավաճանեք եւ եկեք շարունակենք պայքարը»,- ավելացրել է նա:

Ռուբեն Վարդանյանը կարեւորել է վստահությունը եւ հույս հայտնել, որ խոսքն իր արժեքն իսկապես չի կորցրել. «Ես վերանայեցի Ձեր ելույթները պատերազմից հետո, շատ փայլուն, խորը ելույթներ էին, պարո՛ն նախագահ: Ես վստահ եմ, որ Ձեր խոսքերի տակ հիմա էլ կստորագրեք, պարզապես կցանկանայի, որ այդ խոսքերը գործի վերածվեին. շատ կարեւոր է, որ մարդիկ չկորցնեն հավատն այդ խոսքերի նկատմամբ: Ցավալի է, բայց իսկապես երբեմն մենք չենք կարող ասել այն, ինչ ցանկանում ենք, կամ ստիպված ենք դիմել այլաբանության: Այդուհանդերձ, մարդիկ պետք է հավատան մեր խոսքին ու գործին»:

Խոսելով իր բացթողումների մասին, ԱՀ նախկին պետնախարարը նշել է, որ չի կարողացել ապացուցել եւ բացատրել՝ սա նորմալ իրավիճակ չէ, իսկ ճգնաժամն իր օրենքներն ունի: Մեր պայքարը միայն զենքով չէ, եւ տնտեսության, եւ տեղեկատվության դաշտում է: Այս 112 օրը բերեց փոփոխություններ, որոնք անխուսափելիորեն ցույց տվեցին նոր իրավիճակ, նոր Արցախ:

Նա իրեն երջանիկ է համարում այստեղ գտնվելու համար, այստեղի մարդկանց հետ շփումից հասկացել է, թե որքան ուժեղ է արցախցին, հասկացել է արցախցու եւ այլ տեղերում ապրող հայերի տարբերությունը: «Շնորհակալություն, պարոն նախագահ, ամեն ինչի համար, չնայած մենք ունենք տարաձայնություններ տարբեր մոտեցումներում, բայց ընդհանուր գաղափար է, որ մենք ունենք կարմիր գծեր, որ ոչ մեկին չի կարելի անցնել դրանք: Այդ կարմիր գծերը շատ կարեւոր են մեր արժանապատվության, Արցախը հայկական, անկախ եւ արժանապատիվ պահելու համար: Ես վստահ եմ, որ մենք այդ ճանապարհը միասին ենք հաղթահարելու»,- խոսքը եզրափակել է Ռուբեն Վարդանյանը:

«Ապառաժ»

Պայքարը պետք է դառնա մեր կյանքի բոլոր ասպարեզների կարգախոսը

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակին նվիրված՝ ԱՀ ԱԺ հայտարարությունը

Ս.թ. փետրվարի 20-ին գումարվել է ԱՀ ԱԺ արտահերթ նստաշրջան՝ օրակարգում ընդգրկելով ԱՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ ներկայացված արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակին նվիրված ԱՀ ԱԺ հայտարարությունը:

Հայտարարությունը ներկայացրել է ԱՀ ԱԺ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության ղեկավար Արթուր Հարությունյանը, որը խորհրդարանի կողմից ընդունվել է միաձայն:

«35 տարի առաջ՝ 1988 թվականի փետրվարի 20-ին, ԼՂԻՄ բարձրագույն ներկայացուցչական մարմինը, ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարգային խորհրդի արտահերթ նստաշրջանում արտահայտելով ինքնավար երկրամասի ժողովրդի բացարձակ մեծամասնության կամքն ու ցանկությունը, պատմական որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի ԽՍՀ կազմից դուրս գալու եւ Հայաստանի ԽՍՀ-ին վերամիավորվելու մասին: Այդ որոշումը լիովին համապատասխանում էր ԽՍՀՄ գործող սահմանադրությանը եւ միջազգային իրավունքի սկզբունքներին: Փետրվարի 20-ի որոշումը պայմաններ ստեղծեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կազմավորման եւ նրա միջազգային ճանաչման գործընթացը համաշխարհային հանրության կողմից դավանվող իրավական նորմերով տանելու համար:

1988 թվականի իրադարձությունները զորաշարժի ենթարկեցին համայն հայությանը: Սեփական հայրենիքում արժանապատիվ ու ազատ ապրելու եւ ազգային պետականություն ունենալու շարժումը համահայկական բնույթ ստացավ: Արցախը դարձավ համազգային զարթոնքի խորհրդանիշ, իսկ ազգային-ազատագրական պայքարի արդյունքում հայ ժողովուրդը վաստակեց անկախ պետականություն ունենալու իրավունքը:

1988 թվականի փետրվարի 20-ի անկյունաքարային նշանակության որոշմանը հաջորդեց 1991 թվականի սեպտեմբերի 2-ի ԼՂԻՄ մարգային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ ընդունած հռչակագիրը, որը նույն թվականի դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի միջոցով, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ամբողջացրեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կազմավորման գործընթացը:

35 տարիների ընթացքում համահայկական տիրույթում իրագործված ազգային ամեն մի ծրագրի գաղափարական հենքը 1988թ. իրադարձություններն էին:

Երեք ու կես տասնամյակների ընթացքում մենք անցել ենք բազմաթիվ փորձությունների միջով: Այսօր էլ Ադրբեջանը շրջափակման միջոցով փորձում է կոտրել արցախահայության կամքը:

ՊԱՅՔԱՐԸ պետք է դառնա մեր կյանքի բոլոր ասպարեզների կարգախոսը:

Արտահայտելով Արցախի ժողովրդի կամքն ու ցանկությունները՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովը կոչ է անում միջազգային կառույցներին եւ ՄԱԿ-ի անդամ, մասնավորապես Մինսկի խմբի համանախագահ երկրներին՝ հայտարարություններից եւ հորդորներից զատ, գործնական քայլերով՝ քաղաքական, տնտեսական, ռազմական գործիքակազմերով, կանխել Ադրբեջանի էթնիկ զտումների եւ ցեղասպան քաղաքականությունը:

Դիմում է Սփյուռքի եւ ՀՀ մեր հայրենակիցներին՝ հայ ժողովրդի արժանապատվությունը եւ լինելիությունը պաշտպանելու նպատակով համախմբել հայության ներուժը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել՝ սանձելու Ադրբեջանի ծավալապաշտական ու ագրեսիվ գործողությունները:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես ժողովրդի ձայնը ներկայացնող հավաքական մարմին, հավատարիմ է մարդու հիմնարար իրավունքներին եւ, առաջնորդվելով ՄԱԿ-ի կանոնադրության արժեքներով ու սկզբունքներով՝ վճռական է տրամադրված՝ իրացնելու իր պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու համաժողովրդական կամքը: Մեր խոնարհումը բերելով բոլոր ժամանակներում հանուն ՀԱՅՐԵՆԻՔԻ իրենց կյանքը նվիրաբերած հազարավոր նահատակների հիշատակին՝ պատրաստակամ ենք շարունակել նրանց սուրբ գործը հաղթական հանգրվանի հասնելու համար:

Համայն հայությանը եւ Արցախի բարեկամներին շնորհավորելով հիշարժան տոնի կապակցությամբ՝ լիահույս ենք, որ փետրվարյան զարթոնքը նոր լիցք կդառնա համազգային իղձերի իրականացման ճանապարհին»:

Առանց մեր հայրենիքի մենք որպես ազգ լինել չենք կարող. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան

Փետրվարի 20-ին արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Արցախյան շարժման 35-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ ու տոնական միջոցառում է տեղի ունեցել Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում:

Միջոցառմանը ելույթ է ունեցել ՀԱՍԵ թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Արդարությունը բարձրացնում է ազգին,
բայց մեղքը ժողովուրդներ է կործանում»
(Առակաց 14:34)

Աստվածաշնչի Առակաց գրքից այս իմաստուն խոսքերը գալիս են փարատելու մեր բոլոր հակասական մտածումները, որոնք ծնվում են մեր մեջ, երբ հիշում ենք 35 տարիներ առաջ մեր ժողովրդի ազգային վերազարթոնքը եւ երբ միաժամանակ հայացք ենք գցում մեր ներկա կյանքին:

Իսկապես հիշատակի եւ գնահատման արժանի օրեր էին, երբ արցախահայությունը միակամ դարձած, սկսեց իր աստվածապարգեւ ազատության համար այդ շարժումը: Հետաքրքիր անվանում ենք տվել այդ օրերի մեր պայքարին՝ «Արցախյան շարժում»: Սա նշանակում է, որ ժողովուրդը սկսել էր շարժվել, աշխատել, կրավորական անտարբերությունից ու անգործությունից անցնել գործնական քայլերի, եւ արդյունքը եղավ հաղթական: Այո՛, դժվար էր ե՛ւ Շարժման սկիզբը, ե՛ւ դրա բնական շարունակություն հանդիսացող Արցախյան գոյապայքարը, բայց նույնքան, եւ միգուցե ավելի դժվար է այդ ամենը պահելը:

Այսօր, երբ կրկին հավաքվել ենք վերարժեւորելու 35 տարի առաջ սկսված եւ մինչեւ օրս չավարտված «Արցախյան շարժումը», տարբեր հարցեր ու զգացումներ են համակել բոլորիս: Ազգային եւ պետական մեր կյանքում տեղ գտած դժվարությունները, պատերազմի պատճառած անգնահատելի կորուստները, ներկա փորձություններն ու մարտահրավերները խառնվել են յուրաքանչյուր մտածող հայի միտքն ու հոգին: Արցախյան վերջին պատերազմի վերքերը դեռ չեն սպիացել, իսկ թշնամին անընդհատ աղ է լցնում այդ վերքին: Այսօր էլ նա տարատեսակ մեթոդներով փորձում է մարել մեր ազատության եւ անկախության շարժումը:

Մեր երկրի փրկության համար արվող քաղաքական, դիվանագիտական ջանքերի եւ վերլուծությունների պակաս կարծես թե չունենք, որոնք, անշուշտ կարեւոր են, բայց ո՛չ բավարար եւ խորքային:

Մենք, որպես Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականներ, ամեն օր մեր հայացքն ենք ուղղում դեպի երկինք եւ Աստծուց խնդրում ենք Արցախի համար ազատություն, ուժ եւ փրկություն: Բայց Աստված

հենց այնպես որեւէ մարդու կամ ազգի սկուտեղի վրա փրկություն չի մատուցում, այլ տալիս է գործիքներ, ցույց է տալիս ճանապարհը եւ պատրաստ է ուղեկից լինել այդ ճանապարհին, եթե մենք ցանկանում ենք: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսն ասում է. «Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել» (Հովհ.6:64): Մենք՝ որպես քրիստոնյա ազգ, պետք է գիտակցենք, որ կյանքում բոլոր խնդիրների բուն արմատը թաքնված է հոգեւոր դաշտում, ուստի վստահաբար կարող ենք ասել, որ ազգերի, պետությունների քաղաքագիտական ամբողջ իմաստությունն ամփոփված է Սուրբ գրքի հետեւյալ խոսքերի մեջ, թե՝ «Արդարությունը բարձրացնում է ազգին, բայց մեղքը ժողովուրդներ է կործանում»:

Արդարությունն է ազգին բարձրացնում, եւ ոչ թե մեծերի քաղաքագիտությունը, ոչ թե երկրի հարստությունը, ոչ թե զորքերի բազմությունը: Հմուտ քաղաքականությունը եւ դիվանագիտությունը իսկապես կարող են երկրին մի քանի տասնյակ տարիներ բախտավոր վիճակի հասցնել, բայց եթե ազգի մեջ չկա հոգեւոր բարձր մղում բարու եւ ճշմարտության հանդեպ, ապա կառավարիչների ջանքերն ու եռանդը պտուղ չեն տա:

Ինչպես որ մեղքը պատճառ է դառնում մարդու կորստյան, նույնկերպ է լինում նաեւ այն ազգերի պարագայում, որոնց մոտ պակասում է Աստծո երկյուղը եւ զորանում է եսասիրությունը: Աստծո հանդեպ անկեղծ հավատքի եւ բարոյական, առաքինի կյանքի մեջ է թաքնված մեր ազգի փրկության բանալին: Աստվածային օրենքներից զուրկ երկրում ամեն մարդ ինքն է իր աստվածը եւ աշխարհն իր շուրջն է պտտվում: Ակամա ամենքն ապրում եւ գործում են ամենքի դեմ, եւ այս ծածուկ պատերազմի հետեւանքը լինում է այն, որ ազգը ջնջվում է երկրի երեսից, կամ էլ գերի դառնում ուրիշ ազգի:

Սիրելիներ, հետաքրքիր կերպով այսօրը համընկել է մեր եկեղեցու Մեծ Պահքի առաջին օրվա հետ, որ նորից որպես մի ազդակ, հրավիրում է բոլորիս հոգեւոր առումով քննելու մեր անկախության պայքարի էությունը: Եթե մենք արդար, հավատարիմ ու անկեղծ չենք մեր կոչման մեջ, ապա բարոյական իրավունք չունենք փնտրելու դավաճաններ եւ ներքին թշնամիներ՝ փորձելով նրանց վրա գցել մեր մեղքը, որը, ցավոք, հաճախ չենք տեսնում եւ չենք ընդունում:

Այսօր թշնամու կողմից Արցախի դիտավորյալ շրջափակումը մեր մեջ ակամա արթնացրել է այն օրերի հիշողությունը, երբ նոր էր սկսվում մեր պայքարը: Իր բոլոր նեղություններով ու դժվարություններով հանդերձ, այս շրջափակումը ցույց տվեց նաեւ, որ մեր ժողովրդի մեջ դեռեւս առկա է 88-յան ներուժը, որ արցախցիները չեն ուզում լքել իրենց հայրենիքը եւ ի զորու են միասնաբար դիմագրավելու ամեն մի նեղություն: Այսօր նորից թարմ է այն գիտակցությունը, որ առանց մեր հայրենիքի մենք որպես ազգ լինել չենք կարող, որովհետեւ հայրենիքն է ազգի օրրանը, ազգություն ստեղծողը, հայրենիքն է ազգի սիրտը, միտքն ու բովանդակ էությունը կերտողը:

Ուստի, սիրելիներ, մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված իմաստություն տա մեր ազգին, որպեսզի մշտապես լինենք շարժման մեջ հանուն հայրենիքի անկախության, լինենք զգոն եւ խիզախ՝ մեր սխալներն ընդունելու եւ արդարության ճանապարհով մեր ազգին նորից բարձրացնելու համար»:

Անսասան է արցախցու՝ իր պատմական հայրենիքում ապրելու կամքը. Արթուր Թովմասյան

Փետրվարի 20-ին գումարված՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակին նվիրված ԱՀ ԱԺ արտահերթ նիստի սկզբում շնորհավորական ուղերձ է հղել ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս արցախյան ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակի առթիվ: Շարժումը, հիրավի, ունեցավ դարակազմիկ նշանակություն՝ իր ապագայի տեսլականը քարտեզագրելու, կանխորոշելու, տասնամյակների հպատակությունից ազատ ու անկախ ապրելակերպի հայտ ներկայացնելու տեսանկյունից:

Մեր հիշողությունների ժապավենը հետ պտտելով դեպի 1988թ. իրադարձություններ՝ մեկ անգամ եւս ոգեւորվում եւ հպարտանում ենք խորհրդային ժամանակների արցախյան սերնդի նախաձեռնած համազգային զարթոնքով:

Իր ազգային նկարագիրը պահպանելու եւ հետագա էթնիկ ուծացումից խուսափելու միակ ելքն ու երաշխիքը մայր հայրենիքին վերամիավորվելն էր:

Ղարաբաղյան շարժման իրավաքաղաքական գագաթնակետը 35 տարի առաջ այս օրն է: Արտահայտելով հայկական ինքնավար երկրամասի բնակչության բացարձակ մեծամասնության կամքն ու ցանկությունը՝ ԼՂԻՄ բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ մարզխորհրդի պատգամավորները 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանում ԼՂԻՄ մարզը Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմից դուրս գալու եւ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը միավորելու մասին պատմական որոշում կայացրին: Այդ որոշմամբ արցախյան ազգային-ազատագրական շարժումը մտավ իրավական հարթություն, սակայն մեր ժողովրդի ինքնորոշման սահմանադրական իրավունքի խաղաղ իրացմանը հակառակ՝ Ադրբեջանը առաջնորդվել է հիմնախնդիրը հանգուցալուծելու ուժի կիրառման տարբերակով: Ադրբեջանի սանձազերծած 3 պատերազմները վերահաստատեցին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության՝ Արցախն առանց հայերի նենգ մտադրությունները:

Երեք ու կես տասնամյակների ընթացքում մենք անցել ենք ձեռքբերումների ու կորուստների միջով: Արցախի ազատության ու անկախության համար մղված պայքարում հազարավոր հայորդիներ իրենց կյանքն են զոհաբերել: Վիրավոր Արցախն այսօր շարունակում է ապրել այդ զոհողությունների գնով:

Պայքարի ոգի ներարկած փետրվարյան ազգային վերածննդի շունչը եւ մեր հայրենիքի պետականության համար թափված արյունն ու քրտինքը ներկա օրերում նոր ոգորումների մղիչ պետք է հանդիսանա: Դա է արցախցու կենսունակության ու հարատեւության բանաձեւը:

Արցախի Հանրապետության առջեւ ծառացած հիմնախնդիրները հետպատերազմական ժամանակաշրջանում ավելի խորացան: Առաջնահերթությունների շարքում է կաթվածահար տնտեսության, ենթակառուցվածքների վերականգնումը, սակայն 2022թ. դեկտեմբերի 12-ից, երբ Ադրբեջանը պաշարման մեջ առավ Արցախը, խափանվեցին այդ ծրագրերի իրագործումը:

Ադրբեջանը հումանիտար աննախադեպ աղետ է առաջացրել Արցախում՝ նպատակ ունենալով հայաթափել Արցախը: Վստահ եմ, որ այս արհեստածին դժվարությունները եւս կհաղթահարենք:

Թանկագի՛ն հայրենակիցներ, մեր ազգային հպարտությունն աներեր է, այն ոչ ոք չի կարող խաթարել: Մենք վճռական ենք մեր պայքարում, անսասան է իր պատմական հայրենիքում ապրելու, արարելու արցախցու կամքը»:

Անընդհատ խաղաղություն, ազատություն մուրալ չի լինում, ոչ մի ստրկատեր իր ստրուկին ազատությունը սկուտեղի վրա չի մատուցում. Վահրամ Բալայան

Փետրվարի 20-ին արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակին նվիրված՝ ԱՀ արտահերթ նիստին ելույթով հանդես է եկել ԱՀ ԱԺ «ՀՅ Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Վահրամ Բալայանը:

Նա նշել է, որ մարդու ազատությունը աստծո կողմից մարդուն շնորհված ամենամեծ արժեքն է, որն ամրագրված է միջազգային կոնվենցիաներում: Հայկ նահապետը տապալելով Բելին եւ ազատություն բերելով հայոց աշխարհին՝ պատգամել է այն, որ հայրենիքը պահելու համար պետք է պայքարել, սակայն բանաձեւը միայն հայ ժողովրդի համար չէր: Պատմությունը ցույց է տալիս, որ այն ժողովուրդները, ովքեր շարժվում են այս բանաձեւով, ըստ էության հաջողում են:

«Երբ մենք մոռանում ենք պայքարի գաղափարը, ապա մեր պատմությունը վկայում է, որ բազմաթիվ դժվարություններ ենք ունենում եւ չենք կարողանում հաղթահարել մարտահրավերները: Շատ դեպքերում հանրությունը չի արժեւորել, բայց մեր ժողովրդի լավագույն զավակները, դա սկզբունք դարձնելով դարերի ընթացքում, պայքարել են, որպեսզի հայոց աշխարհում հայ մարդն ապրի ու արարի: Հենց փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի այդ որոշումը, ըստ էության, այդ պայքարի արդյունքն է: Ես պետք է ասեմ, որ մենք այդ ճանապարհով գնացինք որպես միջազգային իրավակարգը, մարդու ազատ ապրելու իրավունքները հարգող ժողովուրդ»,- ասել է Վ. Բալայանը:

Պատգամավորը համոզված է, որ փետրվարի 20-ի եւ հետագայում ընդունված որոշումները (խոսքը վերաբերում է 1991թ. սեպտեմբերի 2-ին, դեկտեմբերի 10-ի հանրաքվեին) չեն հակասում ԽՍՀՄ օրենսդրությանն ու միջազգային օրենքներին:

«Մեր ազատությունն ու անկախությունը որեւէ կապ չունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ: Մենք երբեւէ հավակնություն չենք ունեցել Ադրբեջանի տարածքի նկատմամբ: Մենք այլ ճանապարհ չունեինք: Խորհրդային երկրի կործանվելուց հետո մենք չէինք կարող դրա փլատակների տակ մնալ: Մենք պետք է գնայինք այդ ճանապարհով, եւ մենք ընտրել ենք այդ ճանապարհը»,- նշել է Վ. Բալայանը:

Ըստ նրա՝ իրականությանը չեն համապատասխանում այն պնդումները, թե Խորհրդային Միության կործանման պատճառ է դարձել Ղարաբաղյան շարժումը, որովհետեւ խորհրդային երկրի կործանումը որեւէ կապ չունի Ղարաբաղյան շարժման հետ, որովհետեւ դա խոր տնտեսական, քաղաքական օրինաչափությունների հետեւանք էր:

«1991-1994թթ. պատերազմի տարիներին մենք մեր հույսը չդրեցինք որեւէ մեկի օգնության վրա ու հաջողության հասանք: Այն ժամանակ էլ մենք զենք չենք ունեցել, բայց ժողովուրդը միակամ, իր կամքին հավատարիմ, իր ուժերին հավատարիմ գնաց այդ ճանապարհով ու հաջողության հասավ:

Ուզում եմ ասել, որ անընդհատ մուրալ խաղաղություն, ազատություն ստանալ մուրալով, այդպիսի բան չի լինում. ոչ մի ստրկատեր իր ստրուկին ազատությունը սկուտեղի վրա չի մատուցում: Դա ձեռք է բերվում պայքարի միջոցով, եւ պատահական չէ, որ մեր հայտարարության մեջ պայքար ու հայրենիք բառերը համատեղ են, մեծատառերով են: Դա է ճանապարհը»,- նշել է Վ. Բալայանը:

Նա ափսոսանք հայտնեց, որ ժամանակ առ ժամանակ մենք շեղվել ենք մեր որդեգրած սկզբունքներից եւ հանդիպել դժբախտությունների ու դժվարությունների, որի օրինակը արցախյան վերջին պատերազմն է:

«Ինչի՞ մասին է խոսքը: Մենք հաղթական պատերազմ մղեցինք 1991-1994թթ., բայց, ցավոք սրտի, չկարողացանք մեր կյանքը կազմակերպել այնպես, ինչպես պետք է: Մենք չկարողացանք կենսունակ տնտեսություն կազմակերպել: Որպեսզի իմ խոսքը մերկապարանոց չհնչի, դուք ականատես եղաք, որ շրջափակումից 2-3 օր անց մենք կարտոֆիլ, գազար չունեինք:

Ես խորհրդային տնտեսավարման մեխանիզմին կողմնակից չեմ, բայց տեսեք՝ մենք ինչքան ենք հետ գնացել, որ շրջում ենք գյուղերում, տեսնում ենք՝ անասնապահական ֆերմաներն անմշակ են, հողերն անմշակ են: Ցավոք սրտի, հող չունենք այս պահին, բայց գնացեք տեսեք, որ այդ հողերն անմշակ են: Այդ անկատար մեխանիզմի հետեւանքն է:

Մենք ստեղծել ենք մի սարսափելի քաղաքական համակարգ: Կարծես թե բազմակուսակցական համակարգ ենք ստեղծել, որպեսզի այս երկիրը տանենք առաջ, բայց դրանով մենք մեզ կործանել ենք: Եթե չեմ սխալվում, 2020թ. ընտրությունների նախօրյակին 26 կուսակցություն կար գրանցված Արցախի Հանրապետությունում:

Այո՛, ես կարծում եմ, որ մեր ժողովուրդը տաղանդավոր ժողովուրդ է, բայց չեմ կարծում, թե այդքան քաղաքական գործիչներ ունենք, որոնք կարող են ժողովրդին առաջնորդել եւ հարցերին լուծում տալ:

Այսինքն՝ մենք ստեղծել ենք իրավիճակներ, երբ ընտրությունից ընտրություն կուսակցություններ ենք ձեւավորում, եւ այսպես շարունակ ժողովրդի միտքը թմրեցնելով՝ ուզում ենք պետական համակարգ ստեղծել ու ազատ երկիր պահել: Այդպես չի լինում: Գուցե որոշ անհատներ օգտվում են դրանից, բայց որպես կենսունակ երկիր՝ մենք դա չենք կարող պահել:

Մենք հաջողությամբ կործանեցինք մեր կրթական համակարգը: Այստեղ նստածներից մեծ մասը գիտի, որ այս ժողովուրդը մշտապես ծնել է մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, բայց այսօր չկան: Ի՞նչ է, մեր մայրերի արգանդը չորացե՞լ է, իհարկե՝ ոչ, բայց այդ կրթական համակարգով (բոլոնյան համակարգը) մեր կենսունակ համակարգը, ցավոք սրտի, կործանեցինք: Փոքր ժողովուրդները փոքր տարածքի վրա կարող են ապրել, եթե կենսունակ միտք ունեն: Այդ կենսունակ միտքը աստված մեզ շնորհել է, սակայն չենք կարողանում դա զարգացնել: Մենք ինժեներներ ենք պատրաստում, որոնք բազմապատկման աղյուսակը չգիտեն. այդպես չի լինում: Այսպես կարելի է անընդհատ շարունակել:

Ինչեւիցե, այսօր տոն օր է, շնորհավորում եմ մեր հայրենակիցներին: Ճիշտ է, վատ ժամանակներ ենք ապրում, բայց հավատացնում եմ, որ մեր ժողովուրդը սրանից ավելի վատ վիճակներում է ապրել: Թեկուզ ոչ հեռավոր անցյալում, որին մենք ականատես ենք եղել, սակայն մեր ժողովուրդը հաղթահարել է այդ դժվարությունները, որովհետեւ նպատակ ուներ, պայքարելու կամք կար, ցանկություն կար, եւ ես մեր ժողովրդին հորդորում եմ գնալ այդ ճանապարհով ու պաշտպանել մեր հայրենիքը»,- ասել է պատգամավորը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նշվել է Արցախյան ազգային ազատագրական շարժման 35-ամյակը

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարին՝ Արցախյան շարժման 35-ամյակին նվիրված տոնական միջոցառում է տեղի ունեցել Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում:

Միջոցառմանը ներկա էին ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ԱՀ 2-րդ նախագահ Արկադի Ղուկասյանը, ԱՀ 3-րդ նախագահ Բակո Սահակյանը, ԱՀ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանն ու կառավարության անդամներ, ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանն ու ԱԺ պատգամավորներ, ՀԱՍԵ թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ԱՀ ուժային կառույցների ներկայացուցիչներ, զինվորականներ, հոգեւոր այրեր, Արցախյան շարժման առաջամարտիկներ, կրթության եւ մշակույթի բնագավառի ներկայացուցիչներ, արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսանողներ:

Հանդիսավոր նիստը մեկնարկեց ԱՀ օրհներգով, որից հետո ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան ազատագրական պայքարում անմահացած հայորդիների հիշատակը:

Ելույթներով հանդես եկան ՀԱՍԵ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, Արցախյան շարժման ակտիվ անդամներ Սլավա Առուշանյանը, Համլետ Գեւորգյանը, Կամո Սաֆարյանը, Ռազմիկ Պետրոսյանը:

Տոնական միջոցառումն ուղեկցվում էր երաժշտական ու պարային կատարումներով:

Արցախյան շարժման առաջամարտիկ Սլավիկ Առուշանյանի խոսքով՝ ամեն բան սկսվեց, երբ որ ակնհայտ դարձավ, որ կոմունիստական կուսակցությունը, հետեւելով Լենինի ցուցումներին, հարցը չլուծելու համար հանձնաժողովներ էր ստեղծում, եւ գործը տեղից չէր շարժվում:

«1988թ. վերջին առաջ քաշվեց նոր նախաձեռնություն, որը նույն թվականի փետրվարի 1-ին Նորագյուղի գաղտնի ժողովում ընդունվեց եւ Իգոր Մուրադյանի ու Վաչե Սարուխանյանի օգնությամբ տարածվեց մարզի հայկական բնակավայրերում:

Նորագյուղում ընդունված որոշման օրինակելի նախագիծն աննախադեպ է 1921-ից հետո, որովհետեւ առաջին անգամ ձեռնամուխ եղանք ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորման հանրային քննարկմանն ու մայր հայրենիքին վերամիավորման հռչակմանը»,- նշել է Ս. Առուշանյանը:

Համլետ Գեւորգյանն էլ հիշեց այն պահը, երբ նստաշրջանը սկսելու համար լրացավ անհրաժեշտ պատգամավորների քանակը:

Այդ պահին ամբողջ հրապարակը թնդաց, փոքրիկ երկրաշարժ տեղի ունեցավ եւ դրանից հետո հայ ու ադրբեջանցի իշխանավորները ստիպված էին ներկայանալ նստաշրջանին ու լսել նախագահությանը: Ֆանտաստիկ միաբանություն կար 80-ականներից մինչեւ 90-ականների առաջին կեսի վերջը: Ցավոք սրտի, դաժան երեւույթներ սկսվեցին այդ միաբանության մեջ, երբ որ Սփյուռքը, Արցախն ու Հայաստանը՝ նույն մոր երեխաները, դարձան խորթ երեխաներ, որն առ այսօր էլ շարունակվում է:

Համլետ Գեւորգյանը՝ իրավիճակը, որում այսօր հայտնվել է Արցախի ժողովուրդը, որակեց ծանր, սակայն ոչ ծանրագույն: Նա ներկաներին հիշեցրեց 1992թ. պատերազմական իրադարձությունները, երբ գնդակոծվում էին Գանձասարն ու Խաչենագետի ափերը, Ստեփանակերտում ջուր չկար, բոլորն ընկել էին այն միջանցքը, որն այսօր Լաչինի միջանցք են անվանում եւ նման էր 1915թ. ցեղասպանությանը՝ Եփրատ գետի ափերին:

«Այսօրվա վիճակը շատ ավելի փափուկ ենք անցկացնում: Գուցե դա իշխանությունների աշխատանքի արդյունքն էր, բայց մենք այնքան ենք կորցրել մեր հավատը, որ լավ գործին էլ չենք հավատում արդեն»,- ասել է Հ. Գեւորգյանը:

Նա նշեց, որ այսօր ժողովուրդը չի հասկանում՝ իրավիճակի համար ում մեղադրել, ում դեմ բողոքել, եւ հարցեր ուղղեց իշխանություններին, թե արդյո՞ք հնարավոր չէր չհանել մեր բանակը Փառուխի դիրքերից, որպեսզի թշնամին չգար ու հայտնվեր Քարագլխի բարձունքներում, ինչպե՞ս է ստացվել, որ պատերազմից հետո գրավվել են Մեծ Թաղերն ու Խծաբերդը, հնարավո՞ր չէր Աղավնոյի բանակցություններում գոնե էլեկտրականության մասով ինչ-որ շահի հասնել:

Համլետ Գեւորգյանն այդ ամենի մեջ տեսնում է ոչ թե թուրքերի կամ Հայաստանի մեղավորությունը, այլ այն, որ մենք ոչ թե պայքարել ենք ու պարտվել, այլ համաձայնել ենք:

Խոսքի վերջում Համլետ Գեւորգյանը շնորհավորեց շարժման այն առաջամարտիկներին, որոնք իրենց կյանքը չեն խնայել մեր այս օրվա համար: Նա նշեց, որ շարժման առաջամարտիկները մոռացության են մատնված, եւ կոչ արեց հիշել բոլոր նրանց, ովքեր անմնացորդ նվիրվել են սեփական ժողովրդին: Նա համոզմունք հայտնեց, որ արցախցին շարունակելու է ապրել իր հողի վրա այնպես, ինչպես որ ապրել է դարերով:

Շարժման առաջամարտիկներից Կամո Սաֆարյանն էլ բոլորին մաղթեց այն ամուր ոգին, որն ուներ մեր ժողովուրդը 1978-1988թթ., որպեսզի որեւէ մեկը չկարծի, թե թշնամին կամ ինչ-որ ուժեր կարող են մեր ոգին կոտրել:

Նրա խոսքով՝ Արցախյան շարժումն ավելի մեծ թափ ստացավ 1988թ. փետրվարին, որից հետո սկսվել են նաեւ բռնաճնշումները, իրենց կամքը թելադրելը, սակայն միշտ՝ այդ ժամանակներում ժողովուրդը պոռթկացել է:

«Կոլտնտեսությունների այն ժողովները, որոնք հաշվետվությամբ հանդես էին գալիս, օրակարգ մտցրին առաջինը Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցը: Երբ փորձեցին ճնշել, իրենք ավելի ուժեղ սկսեցին դիմադրել, ու այդպես էլ փետրվարի 11-ի դեպքից հետո, փետրվարի 12-13-ին Ադրբեջանի Կենտկոմի 2-րդ եւ 3-րդ քարտուղարները գործուղվեցին Ստեփանակերտ ու Մարտունի: Ու դրանից ավելի ուժեղ դարձանք մենք»,- ասել է Կ. Սաֆարյանը:

Նա նշեց, որ Շարժման ընթացքում իրեն, Արկադի Ղուկասյանին, Ռազմիկ Պետրոսյանին եւ այլ առաջամարտիկների փորձեցին կեղծ մեղադրանքներով բանտարկել, բայց ոչինչ չկարողացան անել, ու բանտերից վերադառնալով՝ իրենք 1988թ. վերջին սկսեցին ձեւավորել ինքնապաշտպանական խմբեր, որովհետեւ հասկացան, որ թուրքի հետ ուրիշ ձեւով խոսել հնարավոր չէ:

Շարժման առաջամարտիկներից Ռազմիկ Պետրոսյանը նշեց, որ շարժումը հեշտ չէր ձեւավորել, որովհետեւ Խորհրդային Միության մեջ էին, եւ շատ բան գաղտնի է արվել:

«Մեր շարժումը իսկական ազատագրական պայքար էր. ե՛ւ կոմունիստներն են պայքարել, ե՛ւ շարքայիներն են պայքարել, ե՛ւ առանձին բանվորներն են պայքարել»,- ասել է Ռ. Պետրոսյանը:

Անդրադառնալով ներկա իրավիճակին՝ Ռազմիկ Պետրոսյանը նշեց, որ շատ սխալներ ենք գործում:

«Երբ որ մի արտասահմանցի էր փորձում գալ, ռուսներն անմիջապես զանգում ու ԱԳՆ-ից կամ ղեկավարությունից էին հարցնում՝ բա՞ց թողնել, թե՞ ոչ: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ ռուսական զորքը կանգնած՝ ադրբեջանցիները փակեցին ճանապարհը, ոչ մեկը ոչ մի բան չիմացավ: Ես ուզում եմ սա հասկանալ»,-ասել է նա:

Նրա կարծիքով՝ այսօր մենք չենք պայքարում, իսկ պայքարելու համար պետք է միավորվել, ու առաջարկեց Արայիկ Հարությունյանին՝ եթե չի կարողանում ղեկավարել՝ հեռանա, ու նոր նախագահ ընտրեն:

Նա ընդգծեց, որ Արցախյան գոյապայքարին ամենաշատ վնաս հասցնողները եղել են Հայաստանի իշխանությունները:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

35 տարի առաջ փոթորկված Արցախյան շարժման վերաիմաստավորում

Արցախյան ազատագրական շարժման 35-ամյակն Արցախում այս տարի նշվեց շրջափակման պայմաններում: Բացակայում էր տոնական տրամադրությունը, սակայն տարբեր միջոցառումներով Արցախի ժողովուրդը վերահիշել եւ վերահաստատել է 35 տարի առաջ սկսած ազատագրական պայքարին իր հավատարմությունը, որը 2020թ. պատերազմից հետո նոր հանգրվանի է հասել ու նոր իմաստ ստացել, սակայն չի մարել:

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 35-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կազմակերպվել են մարզամշակութային տարբեր միջոցառումներ:

«Մշուշի միջից» խորագրով ցուցահանդես

Ստեփանակերտի պատկերասրահում կազմակերպվել է ցուցահանդես, որին ներկայացված էին Շուշիի կերպարվեստի թանգարանի հավաքածուից հրաշքով փրկված գեղանկարներից:

Ցուցահանդեսի բացմանը, որը կրում էր «Մշուշի միջից» խորագիրը, ներկա էին ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, պատգամավորներ, ԱՀ ԿԳՄՍ նախարար Հասմիկ Մինասյանը, ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը, փոխքաղաքապետ Սամվել Ղուլյանը, արվեստի գործիչներ, մշակութասերներ:

«Բոլորս հիշում ենք Շուշիի մշուշը: Երբ արեւի ցոլքերը տալիս էր քաղաքին, ներքեւն ամբողջությամբ մշուշ էր, եւ այդ մշուշի միջից վեր հառնեցին եւ փրկվեցին այս նկարները: Ցուցադրելով այս նկարները մեր հայրենակիցներին՝ ուզում ենք ասել, որ ամեն ինչ չէ, որ կորցրել ենք, ամեն ինչ չէ, որ կորսված է եւ, բնականաբար, սա հիմք պետք է հանդիսանա, որ նորից գնանք եւ 1846թ. կառուցված շենքում՝ Շուշիի կերպարվեստի թանգարանում, վայելենք ոչ միայն այս, այլ նաեւ այն նկարներն ու կտավները, որոնք աշխարհի տարբեր անկյուններից պատրաստակամ են, որ նորից ցուցադրվեն Շուշիի կերպարվեստի թանգարանում»,- ասել է ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը:

«Հետադարձ հայացք, իրականություն եւ հեռանկարներ» խորագրով կլոր սեղան-քննարկում

Փետրվարի 21-ին ԱՀ ԿԳՄՍՆ աշխատակազմի, մշակույթի վարչության, երիտասարդության հարցերի նախաձեռնությամբ Արցախյան շարժման 35-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպվել է «Հետադարձ հայացք, իրականություն եւ հեռանկարներ» խորագրով կլոր սեղան-քննարկում:

Քննարկմանը, որին ներկա էին ԱՀ ԿԳՄՍՆ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսանողներ, բանախոսում էին 1987թ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում ձեւավորված «Արցախյան միություն» ուսանողական կազմակերպության անդամներ Եղիշե Առուշանյանն ու Դավիթ Իշխանյանը:

Քննարկման նպատակը ուսանողներին առաջամարտիկների հետ շփվելու հնարավորություն տալն էր, առաջամարտիկներին՝ վերհիշելու, նորից վերաիմաստավորելու այն պայքարը, որի ակունքներում նրանք կանգնած են, եւ միշտ վառ պահել պայքարի կրակը, ինչն այսօր կենսական նշանակություն ունի արցախահայության համար: Արցախի շրջափակման եւ դրան ածանցվող հետեւանքների պայմաններում արդիական է խոսել 35 տարի առաջ փոթորկված Արցախյան շարժման մասին եւ վերաիմաստավորել այն:

Եղիշե Առուշանյանը, խոսելով շարժման էության մասին, նշեց, որ այն պարզապես ինչ-որ քաղաքական նպատակներ հետապնդող շարժում չէր, այլ իր բնույթով ազգային-ազատագրական շարժում էր՝ հստակ գաղափարախոսությամբ:

«Այն ժամանակ, երբ մենք ձեր տարիքին էինք, չէինք կարող անմասն մնալ մեր հասարակության մեջ տեղի ունեցող ցանկացած երեւույթից՝ թե՛ դրական, թե՛ բացասական առումով: Եթե 60-ական թվականներին շարժումը մտավորականության շարժում էր, ապա 80-ական թվականներին սկիզբ առած շարժումը երիտասարդական շարժում էր: Սովորաբար, երբ որ խոսում ենք շարժման ղեկավարների կազմակերպիչների մասին, բոլորը պատկերացնում են տարիքով, սպիտակամորուս մարդիկ, սակայն՝ ոչ. շարժման ընդհատակյա խմբերի միջին տարիքը երեւի թե չանցներ 25-ը: Այդ խմբերում կային նաեւ ուսանողներ, եւ մենք եւս ընդգրկվեցինք»,- ասել է նա:

Պատասխանելով՝ ինչո՞ւ սկսվեց եւ ինչո՞ւ երիտասարդներն սկսեցին շարժումը հարցին, Եղիշե Առուշանյանն ասաց, որ Գորբաչովյան ձնհալից հետո Խորհրդային Միության տարածքում սկսեցին ձեւավորվել ոչ պետական երիտասարդական տարբեր կառույցներ, որոնց միավորողը սպորտն էր, մշակույթը, բայց ոչ քաղաքականությունը, իսկ Արցախի պարագայում այն այլ ընթացք ստացավ:

«Երիտասարդները, մտածելով Արցախի ապագայի մասին, ընդհատակյա խմբեր ձեւավորեցին եւ սկսեցին աշխատել մարդկանց հետ: Մեծ բարդություն կար այն առումով, թե ինչպես են 18-20 տարեկան երիտասարդները փորձում համոզել կուսակցական փորձ ունեցող մարդուն: Մարդուն, ով 25-30 տարի կոմունիստ է եղել եւ հավատացել է Մոսկվային, հանկարծ գալիս ու ասում ես, որ այս կուսակցության վարած ազգային քաղաքականությունը սխալ է: Պետք է հիմնավորվեր, թե ինչու է ԼՂԻՄ-ի վիճակը վատ, իսկ այդ ինչուների պատասխանն այն ժամանակ երիտասարդները կարողացան գտնել ու մատուցել դիմացինին. մարդիկ հավատացին երիտասարդներին»,- նշել է Ե. Առուշանյանը:

Նա ընդգծեց, որ միշտ էլ գոյություն ունի ավագ սերունդ-կրտսեր սերունդ բախումը. մեկին դուր չի գալիս հագուկապը, մյուսին՝ կենցաղը եւ այլն, սակայն իրենց սերունդն ուներ մի առանձնահատկություն. դա դպրոցն էր, որը մարդ էր դաստիարակում՝ կարգապահ, հայրենասեր քաղաքացի, կիրթ անձնավորություն, որի համար պարտադիր չէ բարձրագույնի դիպլոմ:

«Մենք կարգապահ էինք, մենք օրինապաշտ էինք, եւ երբ սկսվեց շարժումը, մենք չէինք մտածում, որ պետության դեմ ենք գնում, այլ ընդամենը դրված էր սեղանին այն, ինչի իրավունք մենք ունեինք: Մեր մանկավարժական համալսարանն օժտված էր մեծ ինտելեկտով: Այնտեղ ավարտած յուրաքանչյուր ոք ի վիճակի էր լինել ինչ-որ բանի կազմակերպիչ»,- ասել է Ե. Առուշանյանը:

Հայրենասիրության զգացում ունեին Խորհրդային Միության քաղաքացիները, սակայն ազգային գաղափարախոսություն ունենալն արդեն վտանգավոր էր, որի մեջ էլ մտել էր այդ ժամանակ երիտասարդությունը՝ այն գիտակցմամբ, որ յուրաքանչյուր պահի կարող էին նրանց ձերբակալել կամ արտաքսել, որովհետեւ ազգային հողի վրա բանտարկությունը խարան էր, եւ, ի տարբերություն այլ մեղքերի, այդ մեղքը քավել հնարավոր չէր: Սակայն պարտավորեցնող էր «երիտասարդությունն է հասարակության շարժիչ ուժը» նշանաբանը, որի համար էլ երիտասարդությունն իր վրա վերցրեց այդ պարտականությունը:

«Շարժման կադրերում կարող եք տեսնել երիտասարդների, ովքեր դրոշները ձեռքին այս ու այն կողմ էին գնում, թվում է՝ աննպատակ, սակայն դա նպատակաուղղված էր: Եթե ժողովրդի մի հատվածում նկատվում էր պասիվություն, իսկույն խումբը գնում էր այնտեղ եւ սկսում ակտիվացնել: Դա մեր պարտականությունն էր՝ ե՛ւ մարդկանց դուրս հանելը, ե՛ւ կազմակերպելը, ե՛ւ վերջում հարվածը մեզ վրա վերցնելը»,- նշել է շարժման առաջամարտիկը:

ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՀ ԱԺ «ՀՅ Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը շնորհակալություն հայտնեց հանդիպման համար եւ շնորհավորեց շարժման 35-ամյակի առիթով՝ նշելով, որ թեեւ այս օրերն այն օրերը չեն, որ տոնական տրամադրություն լինի, սակայն գաղափարական համոզմունքն ու գաղափարական վստահությունը միշտ պետք է ուղեկցեն մեզ:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը դարձել էր շարժման հիմնական օջախներից մեկը, եւ ինչպես Դավիթ Իշխանյանն է նկատում, իրենց հետ աշխատող ավագ սերնդի ներկայացուցիչները շատ ճիշտ էին ընտրել թիրախը, որովհետեւ հիմնական ինտելեկտուալ խավը հենց այդտեղ էր կենտրոնացած:

Դավիթ Իշխանյանն ընգծեց, որ շատերն են փորձել եւ փորձում առանձնացնել Արցախյան շարժումը:

«Արցախյան շարժումն առանձին չպետք է դիտարկել. սա ազգային-ազատագրական պայքար է, որն ընդհատվել էր 1920-ական թվականներին: Սա այն պայքարն է, որ չի ավարտվել եւ չի ավարտվելու. երբ կարող է ավարտվել՝ դժվար է կանխատեսել: Ձեզանից յուրաքանչյուրը կարող է փորձել թերթել 1920-ական թվականների պատմության էջերը: Շատ ժլատ են պատմական փաստերը, սակայն կարեւոր է, որ յուրաքանչյուրդ կարողանաք ճիշտ գրականություն ընտրել, որովհետեւ ԽՍՀՄ-ի ժամանակ արխիվներից հանված, ոչնչացված փաստերը մեզ հնարավորություն չեն տալիս անդրադառնալու, բայց ներքին բնազդը՝ գենետիկան, մեր գեները իրականության մեջ մեզ ուղղել են:

Երբ հետադարձ հայացքով նայում ենք 35 տարի առաջվա մեր քայլերին, այսօր կարողանում ենք մի քիչ ավելի ուրիշ ձեւով մեր գնահատականը տալ եւ տեսնում ենք, որ 100 տարի առաջ ունեցած ժամանակաշրջանը գրեթե մեզ ուղեկցում է»,-ասել է Դ. Իշխանյանը:

«Ձեզանից յուրաքանչյուրը պետք է իր մեջ կրի այդ պատասխանատվությունը՝ գիտակցված, թե չգիտակցված: Երբեմն մեր մեջ էլ կան չգիտակցված քայլեր: Մենք կանխազգում էինք, որ հրապարակներում չէ, որ հարցերը լուծվում են, որովհետեւ վառոդի հոտը, զենքի առկայությունը մեզ այլ բան էր հուշում: Բերդաձորի շրջանը վստահված էր միայն մեզ: Ինչպե՞ս էինք հայտնվում այնտեղ. խորհրդային բանակի զրահամեքենաների ուղեկցությամբ՝ շինարարական ջոկատների անվան տակ»,- պատմել է Դ. Իշխանյանը:

Նա մի կարեւոր հանգամանք եւս նշեց, որ իրենց հետ աշխատում էին, որպեսզի յուրաքանչյուրն իր համայնքում տանի ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու աշխատանքը, իսկ նրանց թիկունքում կանգնած էին մարդիկ, որոնց գուցե չեն ճանաչել, չեն հարաբերվել, բայց բոլորն էլ մանկավարժական համալսարանի ուսանողներ էին: Բարձր կուրսի ուսանողներին հանձնարարված էր աշխատանքներ տանել նաեւ ցածր կուրսերի տղաների հետ:

«Ես լավ հիշում եմ գյուղատնտեսական քոլեջը, որտեղ աշխատանք էինք տանում, երաժշտական ուսումնարանը, որտեղ տղաները եւս քիչ չէին, բժշկական ուսումնարանը, որտեղ մի քանի տղաներ կային: Այդ տղաներին ի հայտ էինք բերում եւ փորձում մեզ հետ հերթապահության տանել»,- ասել է Դ. Իշխանյանը:

Պատգամավորն անհրաժեշտ համարեց այն, որ յուրաքանչյուրն ընդունի եւ խորը համոզմունք դարձնի իր մեջ՝ ինքը զինվոր է՝ անկախ իր զբաղեցրած պաշտոնից, դիրքից եւ այլն, պետք է լինի գաղափարի զինվոր, որովհետեւ գաղափարական պայքարը որեւէ այլընտրանք չունի, իսկ երրորդը՝ հարատեւ պայքարի գաղափարն է, եւ յուրաքանչյուրը պետք է արմատավորի իր մեջ այն միտքը, որ հայ ժողովուրդը դատապարտված է հարատեւ պայքար մղելու, որի մեջ յուրաքանչյուրն ունի իր տեղն ու դերը:

Ներկաներից բանախոսներին հարց ուղղվեց, թե արդյո՞ք հետադարձ հայացք ուղղելով Արցախյան շարժման վրա՝ նրանք սխալներ ու բացթողումներ տեսնում են, ինչին ի պատասխան՝ Եղիշե Առուշանյանը նշեց, որ սխալը տեսնում է 1994-ից հետո, երբ բոլորը դարձան պետականամետ, սակայն հրաժարվեցին ակտիվ մասնակցություն ունենալ պետական կառավարման համակարգում:

Ինչո՞ւ 1988-ին պայքարն սկսվեց Հայաստանի հետ միավորվելու պահանջով, սակայն այսօր մենք պայքարում ենք անկախության համար հարցին՝ Դավիթ Իշխանյանը պատասխանեց, որ այդ ձեւակերպումը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս:

«Յուրաքանչյուր ոք, քաղաքական ուժ տարբեր բացատրություններ է տալիս, բայց պետք է հաշվի առնենք այն օրերի իրականությունը: Ես կարող եմ շատ գեղեցիկ ձեւակերպում տալ. ՀՀ-ի հետ Արցախի վերամիավորումը ռազմավարական նպատակ է: Մարտավարական առումով մենք այլ ճանապարհ ենք ընտրել, եւ այդ հարցի շուրջ կարելի է երկար բանավիճել՝ ճիշտ էր այդ ուղին, թե՝ ոչ, բայց որդեգրվել է այդ ճանապարհը՝ հաշվի առնելով իրավական հարցերն ու քաղաքական իրավիճակը, ընդհանուր զարգացումներն ու կանխատեսումները: Կարեւոր է արձանագրել մեր նպատակը եւ ոչ թե միջոցները: Մեզ համար դժվար է բացթողումների մասին խոսելը, բայց 2020թ. պարտության հիմնական պատճառն ինձ համար պետական կառավարման ոչ արդյունավետ համակարգն էր»,- ասել է Դ. Իշխանյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առաջնային խնդիրը եղած սուղ ռեսուրսներով գարնանացանի իրականացման ապահովումն է

Շրջափակված Արցախում գյուղատնտեսական ապրանքների ներքին արտադրությունը խթանելու, ոլորտի աջակցության հնարավոր ծրագրերի մասին «Ապառաժ»-ը զրուցել է ԱՀ գյուղատնտեսության նախարար Հրանտ Սաֆարյանի հետ:

- Շրջափակման շարունակման դեպքում ինչպե՞ս է իրականացվելու գարնանացանը: Կա՞ արդյոք սերմերի եւ պարարտանյութերի դեֆիցիտ:

- Սա մեր ամենաառաջնային խնդիրներից մեկն է: Գարնանացանի աշխատանքներն իրականացվելու են պահուստային պաշարների, ինչպես նաեւ Արցախում գործող ագրոմարկետներում առկա սերմերի մնացորդների հաշվին: Նույն կերպ է լուծվելու նաեւ այդ աշխատանքների համար անհրաժեշտ վառելիքի խնդիրը: Ներկա դրությամբ խնդիրներ ունենք պարարտանյութերի քանակի հետ, որ խիստ սահմանափակ է:

Բայց մեր ունեցած հնարավորությունների սահմաններում արվելու է առավելագույնը՝ վարելահողերը գարնանացան հացահատիկային, բանջարաբոստանային, ընդեղեն, կերային եւ յուղատու մշակաբույսերով զբաղեցնելու համար:

- Շրջափակման պայմաններում ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսական ապրանքների ներքին արտադրության զարգացման ծրագրերը:

- Ստեղծված իրավիճակում՝ գարնանացանի աշխատանքների լիարժեք կազմակերպման անհնարինության պայմաններում դժվար է խոսել զարգացման ծրագրեր իրականացնելուց: Առաջնային խնդիրն այժմ կայանում է եղած սուղ ռեսուրսներով (վառելիք, սերմեր, բույսերի պաշտպանության միջոցներ եւ այլն) գարնանացանի իրականացման ապահովումը: Նաեւ անհրաժեշտ է ներկայումս կազմակերպել աշնանացան մշակաբույսերի սնուցման աշխատանքները, ինչը չի իրականացվում պարարտանյութերի ներկրման անհնարինության պատճառով:

Որպես փոփոխություն՝ թերեւս կարող ենք նշել, որ հանրապետությունում առկա բոլոր ոռոգովի տարածքներն այս տարի կօգտագործվեն հիմնականում պարենային մշակաբույսերի մշակության նպատակով՝ զերծ մնալով դրանք տեխնիկական եկամտաբեր մշակաբույսերով զբաղեցնելուց, քանի որ ներքին արտադրության բուսաբուծական մթերքների պահանջարկը, ստեղծված իրավիճակից ելնելով, անհամեմատելիորեն աճել է:

Անասնաբուծության ոլորտում նույն կերպ կշարունակվի կենդանիների մսուրային պահվածքի խթանումը՝ անասնաբուծական նշանակության շենք-շինությունների, դրանց պայմանների արդիականացման, տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման, կերային կայուն բազայի ստեղծման եւ մի

շարք այլ միջոցառումների հաշվին: Փոփոխության կենթարկվեն ծրագրերի որոշ դրույթներ՝ ֆերմերների համար մատչելիության եւ նախարարության կողմից վերահսկելիության աստիճանի բարձրացման նպատակով:

- Հետպատերազմյան շրջանում բավականին գումարներ են հատկացվել ջերմոցային տնտեսությունների զարգացման համար. ծրագրվո՞ւմ է արդյոք այդ ջերմոցները պարենային խնդիրների լուծման համար օգտագործել:

- ԱՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պատերազմից հետո «Արցախի Հանրապետությունում ջերմոցային տնտեսությունների զարգացման ծրագրի» գործարկումը եւ ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից ջերմատնային տնտեսությունների կառուցման ու զարգացմանն ուղղված փոխառությունների տրամադրումն ի սկզբանե նպատակաուղղված են եղել պարենային խնդիրների լուծմանը՝ տեղական բանջարեղենի արտադրության խթանման միջոցով:

Իհարկե, Արցախում առկա ջերմոցային տնտեսությունների մակերեսները սահմանափակության պատճառով դեռեւս հեռու են տվյալ խնդիրը լիարժեք լուծելուց, բայց մոտ ապագայում դրական փոփոխությունները մասնակիորեն նկատելի կլինեն:

Բացի ջերմոցային տնտեսությունների մակերեսների սահմանափակ լինելուց, առկա է նաեւ այլ խոչընդոտ. Արցախում կառուցված ջերմոցների գերակշիռ մասը չջեռուցվող է, այսինքն նախատեսված չէ ձմռանը բանջարեղեն աճեցնելու համար: Դրանք ներկայումս զբաղեցված են կանաչեղենով, որը վաճառվում է տեղական շուկայում:

Ջերմոցների այն փոքր մասը, որը հագեցված է ժամանակակից ջեռուցման համակարգերով, թշնամու սադրիչ գործողությունների հետեւանքով թիրախավորված է, քանի որ էլեկտրաէներգիայի եւ գազի մատակարարման խնդիրների պատճառով մշտական եւ կայուն ջեռուցման ապահովման անհնարինության պայմաններում է գտնվում, ինչը չի կարող բացասաբար չանդրադառնալ բերքատվության վրա:

Նաեւ այդ խնդիրների պատճառով է, որ ջերմատնային տնտեսությամբ զբաղվողները չեն ցանկանում իրենց չջեռուցվող ջերմոցները կահավորել ջեռուցման արդի համակարգերով՝ մտավախություն ունենալով, որ գազի խափանումների հետեւանքով ցանված մշակաբույսերի սածիլները կամ բերքը կցրտահարվեն:

Կառավարությունն, իհարկե, փորձում է եղած սուղ հնարավորությունների սահմաններում աջակցել այդպիսի տնտեսություններին՝ տրամադրելով սահմանափակ քանակությամբ վառելիք ջեռուցման համակարգերի շահագործումը ժամանակ առ ժամանակ ապահովելու համար, բայց բերքի ցրտահարման ռիսկերն այս պահին շատ մեծ են:

Հետագայում նախատեսվում է ջեռուցվող ջերմոցների մակերեսների ընդլայնում՝ պարենային անվտանգության խնդրի լուծման հարցում դրանց դերը զգալիորեն բարձրացնելու նպատակով:

Հարցազրույցը՝
Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

ՀՕՄ-ը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը

Աշխարհի տարբեր ծագերում ապրող մեր հայրենակիցների հայացքն այժմ ուղղված է երկրաշարժի հետեւանքով ծանր կացության մեջ հայտնված Սիրիայի հայկական համայնքին: Միանալով ՀՕՄ-ի աշխարհասփյուռ միավորներին եւ ողջ հայությանն ուղղված «Ձեռք ձեռքի մեր հայրենակիցների կողքին» կոչին, Հայ օգնության միության Արցախի միավորն իր զորակցությունն է հայտնում Սիրիայում ապրող մեր քույրերին եւ եղբայրներին եւ միանում համահայկական օժանդակության աշխատանքներին: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Հայ օգնության միության Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը:

Նա նշել է, որ չնայած շրջափակման ծանր պայմաններին՝ Արցախի կառավարությունը, համագործակցելով Հայ օգնության միության Արցախի մասնաճյուղի հետ, որոշում է կայացրել միանալ համահայկական օժանդակության աշխատանքներին՝ կազմակերպելով դրամահավաք. «Միայն մեր համազգային ամուր միասնականությամբ ու միմյանց սատար կանգնելու անկեղծ ջանքերով է հնարավոր հաղթահարել ինչպես բնության արհավիրքները, այնպես էլ արհեստածին մարտահրավերները: Ձեր նվիրատվությունները ՀՀ դրամով կարող եք կատարել «Արցախբանկ»-ում բացված հաշվեհամարին՝ 22300100156701»:

ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհու խոսքով՝ ՀՕՄ-ը շրջափակման օրերին շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը եւ փորձում է ամեն կերպ նպաստել սոցիալական, կրթական, առողջապահական եւ այլ ոլորտների զարգացմանը: «Շրջափակման պայմաններում առաջին հերթին փորձել ենք ուրախացնել երեխաներին: Քանի որ շրջափակման պայմաններում հնարավոր չէր մեծ քանակությամբ նվերներ ձեռք բերել, օգտվել ենք պահեստներում առկա խաղալիքներից, հագուստից, որոնք ուղարկում են ՀՕՄ-ի տարբեր մասնաճյուղերը: Մեր միավորը ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատ, Մարտունու շրջանի Խնուշինակ, Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ ու Գառնաքար համայնքների աշակերտների, Ասկերանի շրջանի Այգեստան համայնքի մանկապարտեզի մոտ 500 երեխաների համար ամանորյա անակնկալ է պատրաստել: Նշված համայնքների մանուկներն ու պատանիներն արժանացել են նվերների»,- ասել է Լ. Մարտիրոսյանը:

Լիլիթ Մարտիրոսյանը խոսել է մեկ այլ ծրագրի մասին, որի օգտակարության մասին եւս մեկ անգամ համոզվել են հենց շրջափակման օրերին, երբ հոսանքի ու գազի հաճախակի անջատումներ էին լինում:

«Արցախի մի շարք համայնքներում 101 արեւային ջրատաքացուցիչներ են տեղադրվել զոհված, հաշմանդամություն ունեցող, բազմազավակ ընտանիքների համար: Մի քանի սարքեր դեռեւս պիտի տեղադրվեն, ճանապարհի փակ լինելու պատճառով չեն հասել հասցեատերերին»,- ասել է Լ. Մարտիրոսյանը՝ հավելելով, որ նախատեսվում է ծրագիրը շարունակել:

Հիշեցնենք, որ շրջափակման օրերին ՀՕՄ-ի Հայաստանի շրջանը շուրջ 10 տոննա պարենամթերք է հանձնել Արցախի Հանրապետության ներկայացուցչությանը: Այս մարդասիրական օգնությունը ռուս խաղաղապահների միջնորդությամբ հասցվել է Արցախ:

ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության կողմից այն տեսակավորվում եւ տրամադրվում է սոցիալական որոշ խմբերի ներկայացուցիչների (4 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ, զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք, պատերազմի մասնակիցներ) եւ նախարարություն դիմած սոցիալապես անապահով ընտանիքներին:

Հայ օգնության միության Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը հանդիպում է ունեցել ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նորանշանակ նախարար Արմեն Մանգասարյանի հետ:

Արմեն Մանգասարյանը բարձր է գնահատել ՀՕՄ-ի հետ համագործակցությունը՝ նշելով, որ դեռեւս ԱՀ բնակարանային կոմիտեի ղեկավարի պաշտոնում առիթ է ունեցել ծանոթանալու ՀՕՄ-ի գործունեությանը եւ պրակտիկ ու օպերատիվ գործելաոճին: Նա շնորհակալություն է հայտնել այս դժվար օրերին Արցախի կողքին գտնվող բոլոր կազմակերպություններին ու կառույցներին, այդ թվում՝ ՀՕՄ-ին:

Լիլիթ Մարտիրոսյանի առաջարկով՝ Արցախ հասած օժանդակությունից կհատկացվի նաեւ ՀՕՄ-ի Արցախի միավորին դիմում ներկայացրած սոցիալապես անապահով ընտանիքներին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Սումգայիթում տեղի ունեցած արյունոտ բեմադրությունը ոչ այլ ինչ էր, քան նախապես ծրագրած ցեղասպանություն. Սումգայիթյան դեպքերն ականատեսի աչքերով

1988թ. Արցախյան ազգային-ազատագրական շարժմանը թշնամու արձագանքն անմարդկային դաժան էր: Թշնամին, եւս մեկ անգամ աշխարհին ցույց տալով իր ոճրագործ բնույթն ու վայրենաբարո էությունը, ցեղասպանության ենթարկեց հայ ժողովրդին, որի առաջին զոհերը եղան Սումգայիթում ապրող հայերը: Մահից մազապուրծ հայերը անեծքով լքեցին իրենց քրտինքով, արյամբ ու արցունքով ներկված այդ քաղաքը: Նրանցից ոմանք, անտեսելով Արցախի գլխին կախված նույնատիպ վտանգը, հանգրվանեցին այդտեղ: Ստեփանակերտում բնակություն է հաստատել ոճրագործություններից հրաշքով փրկված Սեդա Առաքելյանը, ով ականատեսի իր վկայություններն էր գրի առել, որպեսզի բոլորն իմանան թշնամու իրական դեմքը եւ այլեւս եղբայրական ձեռք չմեկնեն նրան: Ընթերցողը պետք է իմանա, թե ինչպես էին 1988-ի փետրվարյան այդ դաժան օրերին Սումգայիթում ապրող հայերի գլխին սեւ ամպեր հավաքվել: Արհեստածին այդ փոթորիկը պատել էր ողջ քաղաքը՝ իր հետ բերելով մահ ու ավեր: Այն սպառնում էր հիմնահատակ անել ամեն ինչ, մինչդեռ Սումգայիթի հայերն ապրում էին իրենց առօրյա հոգսերով՝ չկռահելով անգամ, որ պիտի մորթվեն սեփական բնակարանում միայն այն բանի համար, որ հայ են:

«Ովքեր տեսել են, չեն մոռանա, իսկ ովքեր էլ չեն տեսել մահվան սարսափը, չպիտի մոռանան անմեղ զոհերի մասին: Անմեղների թափած արյան համար գազազած թշնամիների դեմ կատաղի մարտի ելան Արցախի վրիժառուները: Փառք ու պատիվ բոլոր կենդանի ու ընկած այդ հերոսներին:

Սիրելի՛ ընթերցող, այն, ինչ կատարվել է 1988-ի փետրվարի վերջին երեք օրերին, բառերով նկարագրել անհնար է: Միայն արյունոտ այդ ոճրագործության ականատեսը կարող է նկարագրել մահվան, ավերի ու ավարի այդ բոլոր սարսափելի տեսարանները, մարդկային արժանապատվության ստորացման, ծաղրուծանակի պատճառած ցավը, որն ավելին էր, քան մահը: Դժվար է վերհիշել կատարվածի մասին, սակայն պատմել անհրաժեշտ է. այդ մասին պետք է բոլորն իմանան, քանի որ դա փոքր խուլիգանություն չէր, կամ էլ թյուրիմացություն, ինչպես պնդում էր Ադրբեջանի ղեկավարությունը: Հավատացնում եմ՝ Սումգայիթում տեղի ունեցած արյունոտ բեմադրությունը ոչ այլ ինչ էր, քան նախապես ծրագրած ցեղասպանություն միայն այն պատճառով, որ մենք քրիստոնյա հայեր էինք: Այդ առաքելությունն իր ուսերին էր վերցրել Հեյդար Ալիեւը: Այդ ամենին տեղյակ էր նաեւ Ադրբեջանի ղեկավարությունը, այլապես ոստիկանությունը կատարյալ անտարբերություն չէր ցուցաբերի, իսկ քաղաքի ԲԾԳ-ները հատուկ շրջանակների մեջ չէին առնի հայերի բնակարանների համարները: Այո՛, ամեն ինչ պատրաստված էր նախապես:

Ես պայծառատես չեմ, սակայն իմ սրճարանի հաճախորդների խոսքերից, որտեղ ես աշխատում էի, հասկացա, որ նրանց հրոսակախմբերը ստեղծվել են Նախիջեւանում, հիմնականում Մասիսից, Կապանից ու Սիսիանից տեղափոխված թուրքերից, իսկ նրանց առաջնորդը Հեյդար Ալիեւն էր: Նրանք, համոզված լինելով ոստիկանության անգործության մեջ, մինչեւ ատամները զինված էին դանակներով ու սվիններով, եւ երբ ցեղասպանության կազմակերպիչներից հրահանգ ստացան, սեւ ագռավների պես ներխուժեցին Սումգայիթ, բաժանվեցին մի քանի խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առաջնորդը, եւ թմրանյութերի ազդեցության տակ այդ սեւ ագռավների երամները տարածվեցին բոլոր փողոցներով՝ բղավելով «Հայերը Ղարաբաղում սպանում եւ տեղահանում են մեր ազգին. մա՛հ հայերին, մա՛հ հայերին»:

Այդ երկոտանիների գազազած ամբոխին միացան նաեւ հանցագործները, որոնց ժամանակից շուտ բանտից ազատել էին հենց այս ոճրագործությունը կազմակերպելու համար:

Նրանք սկսեցին ջարդուփշուր անել հայերի խանութները, վառել մեքենաները: Առաջին օրը կարծես զոհեր չեղան: Երեկոյան փոթորիկը հանդարտվեց, եւ քաղաքի վրա անդորր իջավ: Անդո՞ր մի վայրկյան պատկերացրեք հայերի գիշերային հանգիստն այդ մահոտ իրավիճակում:

Հաջորդ լուսաբացին թշնամուն թուլություն ցույց չտալով՝ բոլորս մի մարդու նման դուրս եկանք աշխատանքի. «Մենք ոգով ուժեղ ենք»: Տարածված անդորրը խաբուսիկ էր, այդ ընթացքում նրանք հասցրին ադրբեջանցիներին գրգռել մեր դեմ, լցնել նրանց ատելությամբ հայերի նկատմամբ: Ցեղասպանության իրագործումն ընթանում էր դահիճի կազմած պլանին համապատասխան», - գրում է Սեդա Միքայելյանը:

Սեդան եւ սրճարանի սպասուհին՝ Զինան, բացում են սրճարանը եւ մտնում ներս, իսկ նրանց հետեւից մտնում է ոստիկանը, հենց նա, ով մշտապես հետեւում էր կարգ ու կանոնին: Տիկին Սեդայի հանդեպ ունեցած հարգանքից ելնելով՝ նա Սեդային հորդորում է հեռանալ. «Հենց հիմա փակեք դուռն ու հեռացեք այստեղից», - ասել է ոստիկանն ու ակնթարթորեն դուրս եկել սրճարանից:

- Զի՛նա, քանի դեռ հաճախորդ չկա, արագ փակի՛ր դուռը, - ասում է Սեդան եւ, չհասցնելով մոտենալ, ոտքի հարվածից մի կողմ է ընկնում. ներս էր մտել գազանների ոհմակը:

- Հայուհի՛, մեզ կոնյակ տուր, - վիրավորական ու արհամարհական տոնով հրամայեցին նրանք, ինչին ի պատասխան՝ Սեդան ասաց, որ կոնյակ չունեն: - Իսկ եթե գտնենք, դու հիմա արյամբ պատասխան կտաս, - սպառնացին նրանք եւ մտան վաճառասեղանի հետեւը՝ ջարդուփշուր անելով ամեն ինչ: Հանկարծ նրանցից մեկը հանեց դանակը, մոտեցավ Սեդային ու ասաց՝ «Ձեր հայերը մեզնից մեր հողն են ուզում, մեր Ղարաբաղը, դրա համար դուք պատասխան կտաք»,- մի կողմ հրեց ու դուրս եկավ, ասելով՝ քեզ ողջ-ողջ կրակի վրա ենք պատժելու:

Տուն գալով՝ Սեդան զանգում է Ստեփանակերտ.

- Ժե՛նյա, սիրելի՛ս, ասա խնդրում եմ՝ ի՞նչ է կատարվում ձեզ մոտ:

- Ոչ մի բան,- հետեւում է պատասխանը,- ցույցեր ենք անում, պահանջում ենք ԼՂ եւ Հայաստանի միացում:

- Իսկ դուք գիտե՞ք, որ դրանով բոլոր գազաններին ոտքի եք հանել մեր դեմ:

- Ի՞նչ գազաններ:

- Երկու ոտքանի,- ասում եւ անջատում է խոսափողը:

Սեդայի համար պարզ էր, թե «միացում» արդարացի պահանջի համար ինչպիսի գին պետք է վճարեն իրենք:

«Սիրելի՛ ընթերցող, ինչպես տեսնում ես, 70 տարի գերության մեջ հայտնված Արցախի մեր ժողովրդի արդարացի պահանջին ի պատասխան՝ Սումգայիթում տեղի են ունենում դաժան իրադարձություններ:

Ինչպես գետն է իր հունով ընթանում, շարունակեմ իմ նկարագրությունը:

Այդ ողբերգության օրերին որքան էլ տարօրինակ չէ, ամբողջ ոստիկանությունը անգործության էր մատնված: Մարդկանց տեսադաշտից թաքնվում էին թեյատներում: Եվ ո՞վ կարող էր մտածել, որ նրանցից մեկը, դուրս գալով այդտեղից, կարող էր գազազած հրոսակախմբերին մատով ցույց տալ այն սրճարանը, որը պատկանում էր հայ կնոջ:

Իմ սրճարանը ջարդուփշուր անելուց հետո նորից ահագնացավ փոթորիկը: Այդ գազանները դանակները ձեռքներին նորից տարածվեցին փողոցից փողոց՝ բղավելով՝ «մա՛հ հայերին, մա՛հ հայերին»: Այն շղթայական ռեակցիայի նման տարածվեց ամենուր՝ ընդգրկելով բոլոր ադրբեջանցիներին, անգամ կանանց: Բոլորի մոտ եռում էր ատելությունը հայերի հանդեպ: Շուտով քաղաքը վերածվեց մարդկանց օվկիանոսի, որտեղ ընկնելու տեղ անգամ չկար: Նույնիսկ հիվանդներն էին բարձրացել շենքերի տանիքները՝ այդ արյունալի խրախճանքով հիանալու: Ոչ մի րոպե չէր դադարում գազազած ամբոխի ոռնոցը: Ու չկար ողորմացող մեկը, որ զսպեր արյան ծարավ ամբոխին ու դադարեցներ կոտորածը:

Հայերը որտեղ էլ լինեին՝ տներում, աշխատանքի վայրերում, փողոցում, գազանները հարձակվում էին նրանց վրա եւ առանց հաշվի առնելու սեռ, տարիք՝ ոտքի տակ տալիս, ծակում դանակով, կտրում քիթը, ականջները, ծաղրուծանակի ենթարկելով տանջամահ անում, իսկ ականատեսները, տեսնելով հայերի արյունը, ավելի էին ոգեւորվում եւ միանում այդ արյունոտ զվարճանքին, իսկ ոչ մի ոստիկան չփորձեց անգամ բռնել դահիճի թաթը:

Ես, փակված իմ բնակարանում, պատուհանից ականատես էի լինում այդ ամենին եւ մտածում, մի՞թե ոստիկանությունն անտեղյակ է այս ամենին: Մտածում էի, եւ հանկարծ դիմացի շենքից մի կին, նկատելով ոստիկանին, փորձեց օգնություն խնդրել, սակայն ոստիկանը նայեց կնոջն ու ցուցադրաբար շրջվեց ու հեռացավ. զարմանքից ու զայրույթից քարացա...

Ահա տագնապահար Զինան է զանգում. «Տիկի՛ն Սեդա, դուք չեք կարող պատկերացնել, թե այստեղ՝ մեր տան մոտ, ինչ է կատարվում. սպանում ու տանջամահ են անում ձեր հայերին»,- խոսափողի մեջ լսվում էր Զինայի դողացող ձայնը: Նույն բանը եւ մեր փողոցում էր կատարվում, ես տեսնում էի այդ ամենը:

Սիրտս չդիմացավ, զանգեցի ոստիկանություն: Մի՞թե հնարավոր չէ այս ամենը կանգնեցնել, հարցրի ես նրանց, ինչին ի պատասխան ասացին՝ ձերոնք են մեղավոր, ուրեմն՝ դիմացեք մահին: Նորից է զանգում Զինան, ով իմիջիայլոց ապրում էր գրախանութի վերեւի շենքում՝ ավտոկանգառի մոտ: Ինչպես ամբիոնից, նա իր 3-րդ հարկից տեսնում էր ամեն ինչ: Նա իր տեսած ամեն ինչը պատմում էր ինձ:

«Տիկի՛ն Սեդա, ավտոկանգառի հարեւանությամբ հրապարակը վեր է ածվել մարդկային ստադիոնի, շենքերի տանիքները լցված են ուրախացած դիտորդներով: Բաքվից ավտոբուսներով մարդիկ են գալիս: Հայերին գետնին են նետում եւ ամբոխը, ծեծելով, քարերով նրանց տանջամահ են անում, երեխաներով ֆուտբոլ խաղում: Ահա ամբոխը թողնում է անցնի Բաքվից ժամանած առաջին ավտոբուսը, հետո երկրորդը, եւ նորից հայերին շարունակում են մորթազերծ անել, ծաղրել... Ահա մոտենում է շտապ օգնության մեքենան՝ դիերը հավաքելու: Տիկի՛ն Սեդա, այս հրեշները շրջեցին շտապ օգնության մեքենան, ծեծեցին վարորդին՝ իրենց իսկ ազգակցին: Շտապ օգնության մեքենան ուղղվելով, շուտով հեռացավ»,- պատմում էր Զինան:

Շարունակելի

Հուշերը գրի առավ
Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Հրդեհ ՀՅԴ Ստեփանակերտի գրասենյակում

Փետրվարի 11-ին ՀՅԴ Ստեփանակերտի «Նիկոլ Դուման» գրասենյակում հրդեհ է բռնկվել, որի հետեւանքով այրվել է առաջին հարկը:

Հրշեջ փրկարարները հրդեհը մեկուսացրել են ժամը 3:30-ի սահմաններում: Ամբողջությամբ այրվել է գրասենյակի առաջին հարկում գտնվող պահակակետը:

Տեղի ունեցած պատահարի հետեւանքով մարմնական վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված Միհր Ղահրամանյանը վերականգնվել ու վերադարձել է աշխատանքի:

ՀՅԴ «Ապառաժ» պաշտոնաթերթը աշխատանքային պայմանների բացակայության պատճառով փետրվարի առաջին կեսին չի տպագրվել:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան